ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ 1-ԻՆ ՓՈՒԼԻ

18.08.2025թ.

2025 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի «Էջմիածնի երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում տեղի ունեցավ հանրային լսում՝ Վաղարշապատ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրազեկման նպատակով:

Հանրային քննարկմանը ներկա էին Վաղարշապատ համայնքի ավագանու անդամները, Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ոլորտային ներկայացուցիչները, ինպես նաև մեծ թվով երիտասարդներ: Մուտքի խոսքով հանդես եկավ Վաղարշապատի համայնքապետարանի համայնքապետի օգնական Մանվել Մելիքյանը, ով մանրամասն ներկայացրեց 2025 թվականի մասնակցային բյուջետավորման ողջ գործընթացը:

Հանդիպման ընթացքում տեսասահիկով ցույց տրվեց առաջարկների ներկայացման հայտի օրինակելի ձևը և ներկայացվեց այն բոլոր չափանիշները, որոնք պետք է պահպանել առաջարկը ներկայացնելիս: Մանրամասն ցույց տրվեց կայքում ողջ գործընթացի ապահովման համար հասանելի բաժինները և գրանցման ընթացակարգերը, ներկայացվեցին ժամկետները:

Համայնքապետարանի ներկայացուցիչները պատասխանեցին երիտասարդների կողմից բարձրացված մի շարք հարցերի, որոնք վերաբերվում էին ծրագրային առաջարկների բյուջեներին, քվերակության կարգին և առաջարկների տեսանելիությանը:

Հանրային քննարկման ընթացքում երիտասարդները մեծ հետաքրքություն ցուցաբերեցին գործընթացի նկատմամբ՝ բարձր գնահատելով ընձեռնված հնարավորությանը մասնակցելու Վաղարշապատ համայնքի զարգացմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Մանվել Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մարիամ Զաքարյան